

**ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՅՔ հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատևման և զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու և դրա հիման վրա տարրեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունն առաջարկելու մեջ:

ՀԱՅՔ հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օրյեկտի փությամբ և համահայկական չափանիշով ու հեռանկարով և բացարձակապես գերծ է որևէ հատվածական շահագործությունից կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝

ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների և խնդիրների բարձրացման, հստակեցման և դրանց գործնական լուծման համար գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը՝ գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների և անհատների հետ :

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարրեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը տարրեր մակարդակներով և ծերով:

ՀԱՅՔ հաստատությունը հիմնադրված է և ղեկավարվում է կամ աջակցություն գտնում հայության ճակատագրով մտահոգ և կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարրեր վայրերում ապրող անձանց կողմից: Նրանք ՀԱՅՔ հաստատությանը օգնում են միայն այն գիտակցությամբ, որ հայ իրականության մեջ նման հաստատության գործունեությունը վաղուց ի վեր կենսական անհրաժեշտություն է:

ՀԱՅՔ հաստատությունը որևէ ծեռվ չի կապված, աղյուսական կամ նման այլ կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ հաստատությունը ազգային շահերին հետևող, գիտահետազոտական - ծրագրային բնույթի գործունեությամբ, ոչ շահութաբեր, լրիվ անկախ ընկերություն է:

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՀՈՒՆՔ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

ՀԱՅՔ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայաստանի ու արտերկրի հայության փոխհարաբերություններին նվիրված սույն խորհրդաժողովը, Էապես լինելով ազգային հույժ կարևոր միջոցառում, հուսանք, որ կառաջադրի բազմաթիվ գաղափարներ, տեսակետներ, ինչպես նաև գործնական առաջարկներ ու գործունեության ծրագրեր:

ՀԱՅՔ գիտահետազոտական հաստատությունը, հայության տարրեր հատվածները դիտելով որպես ազգային ընդհանուր համակարգի գոյավիճակ և դրա բարելավման համար անհրաժեշտ ջանքերի ու միջոցների կիրառումը դիտելով որպես ազգային կառավարման գերխնդիր, այն դարձրել է իր գործունեության թիվ 2 ծրագիրը՝ «Ազգային կառավարման համահայկական համակարգի կատարելագործում»*, որի մասին ցանկանում է Խորհրդաժողովին ներկայացնել իր որոշ տեսակետներն ու նշակած նյութերը: Դրանք արդյունք են Հայաստանում և խորհրդային Սփյուռքում, ապա և արտաքին Սփյուռքում կատարված ավելի քան երեսնամյա հետազոտությունների, դիտարկումների, քննարկումների և սեմինար - խորհրդաժողովների:

Նախ համառոտ շարադրենք այդ տեսակետները:

Հայության և Հայաստանի իրավիճակի բարելավման այսօրվա գերխնդիրը, որի կատարման ուղիները գտնելու համար է հրավիրված սույն Խորհրդաժողովը, հայության ուժերը համախմբելը և դրանք առաջին հերթին Հայաստանի Հանրապետության կայացման, ամրապնդման, ապահովության և բարգավաճման համար ծառայեցնելն է: Այս գերխնդիրի գործնական կատարումը տվյալ փուլում, ըստ խորհրդաժողովի

* ՀԱՅՔ հաստատություն, Տեղեկագիր թիվ 6 (Երևան, 1992թ.), էջ 4-8. Տե՛ս կից քաղաքածրը.

օրակարգի նախագծի, թեև միտված է Հայաստանի ու արտերկրի հայության հարաբերությունների ավելի սերտացմանք սփյուռքահայության թե՝ նյութական հնարավորությունների և թե՝ գիտելիքների, փորձառության ու հմտության ներգրավումն ապահովելուն՝ Հայաստանի կայացման, աճրապնդման և զարգացման գործում, սակայն փորձը ցույց է տալիս, որ միտումներն, ի վերջո, հիմնականում միայն դրամական ներդրումների ներգրավմանն են ուղղվում: Դա էլ շատ կարևոր է: Բայց քանի որ գործարար իմաստով Հայաստանի տնտեսությունը ներկա դրությամբ այսքան էլ արդյունավետ ներդրման օրինակ չէ, ապա սփյուռքահայերի նյութական միջոցների տրամադրումը Հայաստանի տնտեսությանն ավելի շատ հայրենասիրական զգացմունքներից բխող նվիրատվության է նմանվելու, քան թե գործարար ձեռնարկի՝ անկախ այն հավաստիացումներից, թե Հայաստանում ներդրումները շահույթ են ապահովելու, այն էլ ավելի մեծ շահույթ, քան իրենց երկրներում:

Օգտակար է նաև հաշվի առնել, որ սփյուռքահայ կապիտալ՝ որպես այդպիսին, ըստ երևույթին գոյություն չունի, գոյություն ունեն սփյուռքահայ գործարար անձիք, ովքեր, ի դեպ, որպես լճիհանուր կանոն՝ ազատ կապիտալ գրեթե չունեն և հաճախ իրենք են ձգուում պարտազումարներ ներդնել իրենց ձեռնարկներում:

Ակնկալել, որ սփյուռքահայ գործարարը Արգենտինայից, Ֆրանսիայից, Իրանից, ԱՄՆ-ից և այլն «վասն հայության» իր կապիտալը տեղափոխելով ավելի մեծ ռիսկի տակ է դնելու Հայաստանում՝ իրեն անսովոր, հեռու և ակնհայտորեն անբարենպատ պայմաններում, այնքան էլ տրամարանական չէ: Ըստ տարիների փորձի՝ անտրամարանական է ստացվում նաև գործնական արդյունավետության իմաստով անհրաժեշտ որակով և քանակով ժամանակի ներդրումը: Բայց մի հանգամանքից, որի մասին նշում ենք ստորև, հետևյալ պատմական արագ ակնարկից հետո:

Հայ իրականության մեջ Հայաստան – Սփյուռք հարաբերությունների հարցը՝ ձևով տարբեր, բայց էությամբ՝ նույնը, առաջացել է հատկապես հետեւենյան արտաքին Սփյուռքի գոյացմանք և Հայաստանի խորհրդայնացմանք: Մոսկվա-

Երևանում մշակվող և Մոսկվայում հաստատվող՝ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում ակնկալվում էր.

- Սփյուռքի հակախորհրդային տրամադրությունների խափանում.

- Խորհրդայնամետ միջազգային քարոզության նպաստում.

- Խորհրդային հասուկ ծառայություններին հնարավոր օգնություն:

Այս նպատակների իրագործման համար խորհրդային իշխանությունը մասնագիտական ընդարձակ, լուրջ և հետևողական աշխատանք էր տանում, նախ՝ ճանաչելու և հասկանալու համար, թե ինչ է իրենից ներկայացնում արտախորհրդային Սփյուռքը (ներքին Սփյուռքի մասին խոսք էլ չեր լինում), նրա տարբեր հատվածները, խավերը, կազմակերպությունները և ինչ՝ գաղափարներ ու կարողություն ունեն առանձին անձիք: Երկրորդ՝ աշխատում էր համապատասխան հարաբերություններ ստեղծել դրանց հետ, սիրաշահելու, հեղինակություններ բարձրացնելու և օգտագործելու, կամ, հակառակը, վարկարեկելու և չեղորացնելու համար: Այս և այլ նպատակներին հասնելու համար խորհրդային իշխանությունը աշխատում էր նաև օգնել և խրախուսել Սփյուռքին մշակութային, կրթական, մարզական երիտասարդական, մասնագետների պատրաստման և այլ ծրագրերի միջոցով, որով նաև սեր ու կապվածություն էր ստեղծում Խորհրդային Հայաստանի նկատմամբ:

Տասը տարի առաջ Երրորդ Հանրապետության դեկավար շրջանակների ակնկալությունները նույնպես հիմնականում արտաքին Սփյուռքի հետ էին կապված, բայց այն տարբերությամբ, որ դրանք համարյա բացառապես նյութական էին (ոչ միշտ առանց անձնական շահագրգռվածության), սակայն սպասելիքները հիմնականում չարդարացան, և Հայաստանի կողմից խորհրդանշական իսկ օգնությունն աստիճանաբար չբացավ: Ծիծու է, որ միջոցները խիստ նվազել էին, բայց ծիծու է նաև, որ հասուկ ջանքեր չգործադրվեցին (ընդհակառակը) եղած միջոցները օգտագործելու և տարբեր խոչընդոտները վերացնելու, որպեսզի հայության երկու հատվածների ազգային

միասնության խնդիրն, այնուամենայնիվ, կատարվի՝ նույնիսկ ավելի մեծ արդյունքով:

Սփյուռքյան մասնագիտական ներուժից օգտվելու մասշտաբները աննշան էին, և այդ ուղղությամբ առաջընթացի փորձները հիմնականում հաջողության չհասան, որովհետև արտերկրի հայության հետ հարաբերությունների նպատակի գաղափարական հիմքը բռնվագը սուրյեկտիվ բնույթ էր կրում և խիստ քաղաքականացած էր՝ այս անգամ իր տեսակի մեջ:

Այժմ, եթե Հայաստանի իշխանությունները Հայաստան – Սփյուռք հարաբերություններին ըստ երևոյթին ավելի պետական մոտեցում են ցուցաբերում, մեր կարծիքով, այդ միտումը ի զրոյ կիմնի դրված խնդիրը հաջողությամբ կատարել, եթե ապահովի որոշ նախապայմաններ: Դրանցից են նախ՝ այս մեծ, կարևոր և պատասխանատու նպատակի համար կազմակերպական կառավարման նոր սկզբունքով և բովանդակությամբ կառույցի ստեղծումը՝ ընդգրկելով դրա մեջ համապատասխան գաղափար, գիտելիքներ և փորձառություն ունեցող անձանց: Երկրորդ՝ անցյալի թե՝ դրական և թե՝ բացասական փորձը ճիշտ ու ամբողջությամբ հաշվի առնելը:

Այսքանը խնդրի լուծման, կարելի է ասել, տեխնիկական կողմն է: Ինչ վերաբերում է գերխնդրի լուծման էական կողմին, ապա այն, հակիրճ ասած, ներառում է հայ ժողովրդի ազգային (նաև՝ մարդկային), հոգևոր, բարոյական, հոգեբանական և գաղափարական վիճակի բարելավման անհրաժեշտությունը, ինչպես նաև նրա՝ ազգային ու համամարդկային բարոյական արժեքների արժեքման աստիճանի և ազգային ինքնազիտակցության մակարդակի զգալիորեն բարձրացումը:

ՀԱՅՔ հաստատության տեսակետից Հայ ազգի ու Հայաստանի ընդհանուր ապահովության և բարեկեցության անհրաժեշտ պայմաններից մեկը՝ Հայաստանի տնտեսության վերելքը, արտերկրի հայության զրոյ գործարար շահագրգուժության վրա հիմնված ներդրումների հետ կապելլ անհեռանկար է: Հայաստանը, զոնե տեսանելի ապագայի համար, չի կարող իրեն անհրաժեշտ ծավալով ներդրումների և լնդիանքապես գործակցության համար բավարար գործարարական

շահագրգուժություն առաջացնել: Սակայն այդպիսի ներդրումները ու գործակցություն կարող են առաջանալ հայ մարդու, Հայաստանում, թե Սփյուռքում, ազգային ինքնազիտակցությամբ ու հոգու պարտքը կատարելու շահագրգիռ պատրաստակամությամբ: Մեր ազգի բոլոր կենսագործումները բխել են դրանից՝ մարգմանչաց ու Վարդանանց գոյակերտումից մինչև Սարդարապատյան և Արցախյան գոյապայքարի հաղթանակները: Եվ հազարամյակների այս իրականությունը հաշվի չառնել ու դրա վրա չիմնվել՝ կնշանակի, որ կա՞մ խախտված է մեր ինքնաճանաշման բնագրի ու զիտակցությունը և կա՞մ արժեզրկված են մեզ համար մեր տոհմիկ հոգեկան, բարոյական և գաղափարական արժեքները...

Խսկ տնտեսական շահագրգություն պետք չէ՝: Պատասխանն է. պետք է, այն էլ՝ շատ: Բայց դրա բավարարումը հնարավոր կդառնա ամբողջ Ազգի բոլոր բնագավառների ուժերի, հնարավորությունների և միջոցների գերազանց ազնվության և հմտության համախմբմամբ, համադրմամբ ու ներդրմամբ: Եվ այն ժամանակ Հայաստանը ի վիճակի կիմնի առաջացնելու այնպիսի՝ գործարար շահագրգություն, որը կիրապուրի ոչ միայն հայ, այլև աշխարհի տարբեր գործարարների ևս:

Ուրեմն, Հայաստանի և Սփյուռքի՝ Արգենտինայից մինչև Ֆրանսիա և Սիրիի, Ավստրալիայից մինչև ԱՄՆ և Իրան ցրված՝ բազմաթիվ տարբերություններով հայերի միջև հարաբերություններ ստեղծելու, գործնականացնելու և ազգի ու Հայրենիքի վերելքի համար դրանք արդյունավորելու համար, այդ հարաբերությունների ճարտարապետները, կառուցողները և ուղղություն տվողները ոչ միայն պետք է խորապես և ճիշտ հասկանան համայն ազգի որակական հատկությունների արդի վիճակը, այլև նապատակադրվեն և կարողություն ունենան շեշտակի միջոցներով ու արագությամբ դրականորեն ազդել այդ հատկությունների վրա՝ բարձրացնելով դրանք հայ ազգի տոհմիկ որակի մակարդակին: Դա պետք է արվի այն հաշվով, որ այդ ազդեցության արդյունքում ստեղծվի մեր հայրերի հավատքից բխող և դրա վրա հիմնված ազգային գաղափարախոսության այն մքնուրսը, որում Մեկ Ազգ, Մեկ Հայրենիքի վերելքին ծառայելող դառնա յուրաքանչյուր հայի կյանքի գլխավոր իմաստը,

գերազույն նպատակը և մանավանդ, իոզու սրբազն պարտը:

Մեր համոզմամբ, հայ ազգի վերոհիշյալ գերխնդրի կատարման հիմնական նախապայմանը հայերի հոգու և գիտակցության մեջ այդ մքնոլորտի ստեղծումն է: Եվ այս ուղղությամբ հայության իրենց օրինակով առաջնորդելու պատրաստվող ուսինական պահիքաները պետք է դառնան Ազգի և պետականության դեկավարությունը և մտավորականությունը՝ Հայրապետության առաջնորդությամբ ու պատասխանատվությամբ...

Ազգի համար ճակատագրական այս նպատակի կենացործման համար էական նշանակություն ունի բոլոր, բայց հատկապես պատասխանատու դեկավարների մարդկային-ազգային հոգեբարոյական և գաղափարական հարազատությունը, պարտաճանաչությունը, պատրաստակամությունը և վճռականությունը, որոնց բավարար մակարդակի լինելու շափանիշը կլինի՝ այսքան վայրիվերումներից հետո ազգային հոգեբարոյական, գաղափարական և ինքնագիտականական վերազարբունքն առաջնորդելու նրանց անկեղծ ցանկության և համապատասխան հմտության աստիճանը, մանավանդ՝ նրանց անձնական օրինակը: Քանի այդ վերազարբունքով միայն կարող է ստեղծվել համայն հայության հավատքի ու ազգային գիտակցության փրկարար մքնոլորտը, որի մեջ հայը կվերափոխվի և կարողանա ապրել իր նախայաց կերտած կերպարով, նկարագրով ու բարոյական արժեքներով: Նման կյանքով ապրելը, լինելով հայ ազգի գերխնդրի և ամեն տեսակ խնդիրների կատարման աստվածաշնորհ բանալին, հարկ է, որ դառնա նաև հայ ազգի և պետականության քաղաքականության առանցքը:

Այս ըմբռնումով ՀԱՅՁ հաստատությունը դիմում է Համահայկական Խորհրդաժողովի հարգարժան մասնակիցներին, որպեսզի իրենց առաջ դրված գերխնդրի կատարման ջանքերում պատշաճ ուշադրություն դարձնեն հատկապես համայն հայության հոգեկան անաղարտության, բարոյական կորովի, գաղափարական վեհության և ազգային առողջ ինքնագիտակցության վերականգնման ու ի հարկի վերակերտման խնդրին, մանավանդ նոր սերնդի ազգային տոհմիկ կերպարի և նկարագրի կերտմանը՝ որպես նախապայման հայության և Հայաստանի ապահով ու արժանավայել ներկայի ու ապագայի:

ՈՒՂԵՐՁԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅՁ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «ՀԱՅՁ հաստատություն, Ծրագիր թիվ 2, «Համահայկական կառավարման համակարգի կատարելագործում», ՀԱՅՁ հաստատություն, Տեղեկագիր թիվ 6(էջ 4-8)

- «Հայության ազգային կառավարման կատարելագործում», ՀԱՅՁ հաստատության սեմինար-խորհրդակցությունների անցկացման օրակարգի օրինակ (քերված է սույն գրքույկում)

- «Հայության քաղաքացիական կարգավիճակ. 1994թ. հունիսի 11-ի՝ ՀԱՅՁ հաստատության սեմինարի նգրակացությունը (քերված է սույն գրքույկում)


- «Հայ ազգային իրավիճակը 1990-ական թվականների շեմին» (ՀԱՅՁ հաստատություն, Տեղեկագիր թիվ 2, 1990թ. դեկտեմբեր)

- «Ազգային պետական իրավական և կայուն գերիշխանության հաստատման խնդիրները» (ՀԱՅՁ հաստատություն, Տեղեկագիր թիվ 3, 1991թ. մարտ)

- «Հայության հոգեբարոյական ու ընկերային երևույթների և հարցերի քննարկման կարևորության մասին», և ՀԱՅՁ հաստատության թիվ 1 ծրագիր (ՀԱՅՁ հաստատություն, Տեղեկագիր թիվ 3, 1991թ. մարտ)

- «Ահազանգ՝ զգաստության, վերաճանաչման, վերահաստատման (Հայոց Ազգային Գաղափարախոսության տեսակետից)» (ՀԱՅՁ հաստատություն, Տեղեկագիր թիվ 3, 1991թ. մարտ)

- «Հայ Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ), Հստակեցման ու ճանաչման քայլեր» (ՀԱՅՁ հաստատություն, 2-րդ հրատարակություն, Երևան, 1997թ. հոկտեմբեր):



ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

Թիվ 6

ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 2

Համահայկական կառավարման համակարգի կատարելագործում

Հնագիտական պահումներ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՑԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՍՏԵՂԾԱՍՆ ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի է, որ որևէ կազմակերպության, հավաքանության կամ ազգի գոյությունն ու առավել ևս զարգացումն ու բարգավաճումը մեծ չափով կախված է նրա կառավարման վիճակից: Որևէ հասարակական համակարգի համար առաջնային նշանակություն ունի նախ՝ իր կառավարման կառույցի համապատասխան լինելը գոյություն ունեցող դրությանը, պահանջներին ու խնդիրներին. երկրորդ՝ այդ կառույցի անխափան ու արդյունավետ գործունեության ապահովումը բոլոր պայմաններում:

Ամենակատարյալ կառույցներն իսկ ժամանակի ընթացքում պայմանների, պահանջների, հետևապես և խնդիրների փոփոխության պատճառով վերատեսության կարիք են օգում, և ժամանակին կատարված վերատեսությունն ու ըստ հարկի փոփոխությունները շատ անգամ բախտորոշ նշանակություն են ունենում տվյալ համակարգի համար:

Հայության վիճակն այս տեսանկյունից քննելու և հայ ազգը իր բոլոր հատկածներով որպես մի հասարակական համակարգ դիտելու դեպքում ի հայտ է գալիս, որ հայությունը, դարերի ընթացքում զրկված լինելով իր ինքնիշխանությունից՝ տրոհված մի քանի տիրապետությունների միջև, և աշխարհով մեկ ցրված լինելով, չի ունեցել քաղաքական, տնտեսական, ընկերային և այլ բնագավառների ամբողջական կառավարման համագոյային կառույց: Ինչ վերաբերում է Հայ առաքելական եկեղեցու համագոյային կառույցին, ապա այն հայ իրականության մեջ հոգևոր-կրոնական ոլորտից այն կողմ թեկութ գործել է կրթական, մշակութային և մասամբ էլ այլ բնագավառներում, սակայն ունեցել է սահմանափակ իրավասություններ ու հնարավորություններ՝ միշտ կրելով օտար տիրապետությունների ճնշումն իր բոլոր հետևանքներով:

Համահայկական առումով հայ ազգային արդի

կառավարումը հիմնականում շարունակում է կրել անցյալից եկող հետևյալ հատկանիշները.

ա) Հայ ազգը, որպես համակարգ, այժմ էլ չունի համագոյային և կյանքի բոլոր բնագավառներն ընդգրկող կառավարման կառույց:

բ) Արտաքին (կամ արևմտյան) Սվյուտքի տեղական կառավարման հայ ազգային կառույցների գոյություն ունեցող կազմակերպման դրվածքը հիմնականում նախագծվել ու գործարկվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին և, ըստ ամենայնի, այն մեծ մասամբ չի համապատասխանում հայության ներկա և տեսանելի ապագայի պայմաններին, պահանջներին և խնդիրներին:

գ) Ներքին (արևելյան) Սվյուտքը, ընդհանրապես զրկված լինելով հայ ազգային կառավարման որևէ կառույցից, միայն վերջերս է հնարավորություն ստացել ձգտելու փոփոխություն մտցնել իր այդ վիճակի մեջ:

Բոլոր դեպքերում, ինչպիսին էլ լինեն համահայկական և տեղական կառավարման կառույցների գոյության կամ դրանց կատարելության ու արդյունավետության վերաբերյալ նախական դիտարկումների եզրակացությունները, այժմյան բարդ և դեռ բարդացող պայմաններում հայության ամբողջական կամ որևէ հատվածի անվտանգության ու կենսական շահերի պաշտպանության, ինչպես նաև հետագա զարգացման ու բարգավաճման նպատակով իր մարդկային, նյութական, դիրքային և այլ հնարավորություններն ու ներուժը արդյունավետորեն օգտագործելու համար, ըստ երևոյթին, բացարձակապես անհրաժեշտ է, որ հայության կառավարման դրությունը՝ որպես կարևորագույն խնդիր, գիտական վերատեսության ենթարկվի, ուսումնասիրվի, և հարկ եղած դեկում փոփոխությունների կամ նոր կառույցների ստեղծման նախագծեր առաջարկվեն հայության համապատասխան մարմիններին, շրջանակներին:

Նշված կառույցների կատարելության ու արդյունավետության համար, որպես չափանիշ, հավանաբար, հարկ է սահմանել հետևյալը.

1. Կառույցի կատարելությունը չափվում է նրա

ճկունությամբ, տոկունությամբ և բոլոր պայմաններում անխափան գործելու կարողությամբ:

2.Կառույցի արդյունավետությունը չափվում է նրա՝ ազգի բոլոր հատվածների բոլոր տեսակի հնարավորությունները, կարողություններն ու ներուժը ամբողջ ազգի կամ վերջինիս որևէ հատվածի կենսական կարիքների բավարարման կամ պաշտպանության վրա հիմնվին ու արագ կենտրոնացնելու և արդյունավետորեն օգտագործելու ունակությամբ:

* * *

Ազգային տեղական և համահայկական կառավարման իրավիճակի վերանայման և հարկ եղած փոփոխությունների կամ նոր կառույցների ստեղծման կարևորագույն խնդիրներից են՝

ա) ցրված հայության ազգային պատկանելության, քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կարգավիճակի սահմանումը.

բ) այդ կարգավիճակը հայության տարրեր հատվածների կողմից ընդունելի դարձնելու և գործարկելու հնարավորությունների, պայմանների, միջոցների ու փուլերի նախատեսումը, հաշվարկումն ու ծրագրումը.

գ) հայկական ազգային քաղաքացիության իրավական և գործնական համատեղելիությունը այլ երկրներում բնակվելու կամ քաղաքացի լինելու կարգավիճակի հետ:

Այս ըմբռնումով ՀԱՅՔ հաստատությունը կազմել է իր թիվ 2 ծրագիրը, որը սերտորեն առնչվում է թիվ 1 ծրագրի հետ: Թիվ 2 ծրագրի արագ ու արդյունավետ իրագործման համար ՀԱՅՔ-ը գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարմանը զուգահեռ կառավարման հարցերի իր հանձնախմբի միջոցով կազմակերպում է նաև գիտախորհրդակցական սեմինարներ, որոնց արդյունքները պարբերաբար տպագրվելու են սույն տեղեկագրում: Եթե վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ մեր ընթերցողներն ունեն ուսումնասիրություններ, դիտարկումներ կամ որոշակիորեն հիմնավորված տեսակետներ, կարող են դրանք ուղարկել տեղեկագրի հասցեով:

ՀԱՅՔՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

Թիվ 2

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՎԱԾՅԻՆ ԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՎԱԳԻ

ՀԱՍՏՈՒԾ ՆԱԽԱԳԻԾ

Հայ ազգի ցրվածության ու անկառավարելիության պայմաններն ակնհայտորեն բացասական ներգործություն են ունենում բազմաթիվ կենսական խնդիրները լուծելու և հատկապես ազգի հնարավորությունները, միջոցներն ու ներուժն իր իսկ անվտանգության, գոյապահպանման ու զարգացման համար լիարժեք ու արդյունավետ օգտագործելու տեսակետից:

Հայոց ազգային կառավարման համակարգի ընդհանուր խնդիրը և հատկապես այդ համակարգի արդյունավետության աստիճանը, ըստ երևույթին, հարկ եղած գործնական ուշադրության չի արժանացել, թեև վաղուց ի վեր այն բացարձակապես չի համապատասխանում ո՞չ ազգի փոփոխված պայմաններին ու կարելիություններին, ո՞չ էլ նրա կենսական պահանջներին:

Եթելով այս իրականությունից՝ ՀԱՅՔ հաստատությունը, հիմք ընդունելով համայն հայության կառավարման համակարգի ու կառույցների վերատեսության և բարեփոխության անհրաժեշտությունը, կազմել է իր թիվ 2 ծրագիրը՝ հետևյալ սկզբունքների համաձայն:

Հայ ազգային կառավարման համակարգն ու կառույցը պետք է՝

ա) ներառնի ամբողջ հայությունը.

բ) օժտված լինի տեղական լիիվ ինքնավարությամբ և միաժամանակ ապահովի քաղաքացիություն համահայկական իրավական կամ բարոյական հիմքի վրա՝ որոշակիորեն արտահայտված հայ քաղաքացու իրավունքների ու պարտականությունների դրույթներով.

գ) կազմված լինի և գործի ամենաժողովրդավարական հիմունքներով՝ ապահովելու համար անհատի, ազգային

փոքրամասնությունների և քաղաքական, հասարակական, տնտեսական, կրոնական ու այլ խմբակցությունների և կազմակերպությունների մարդկային բոլոր իրավունքները.

դ) բոլոր վայրերում, ելեկով պայմաններից, յուրաքանչյուր հայի համար հնարավորություն ստեղծի մասնակցելու ազգային կյանքի ամենաբնորոշ գործընթացներին.

ե) հայության որևէ հատվածի, ինչպես նաև յուրաքանչյուր անհատ հայի գերծ պահի ազգային քաղաքացիական կարգավիճակից բխող որևէ տեսակի հալածանքներից.

զ) շահագրգոհ ամեն մի հայի և հայկական ամեն մի հատվածի՝ առավելագույն չափով մասնակցելու ազգային կյանքին՝ քաղաքացիական իրավունքներով, պարտականություններով և հարազատ ու գործնական մասնիկը դառնալու ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ:

Հայության կառավարման համակարգի և կառույցի վերջնական նախագիծը Ենթադրվում է կազմել մասնագիտական անհրաժեշտ ուսումնասիրություններից, հաշվարկներից և խորհրդակցություններից հետո:

Այնուհետև հայության տարրեր հատվածներում համագույն քննարկումների ու համաձայնեցման համար Ենթադրվում է ստեղծել մի հատուկ հանձնախումբ, որին հարկ է անդրադառնալ առանձին:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ ԹԻՎ 2

«ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ»

Սույն ծրագիրը վերաբերում է հայության կառավարելիության կատարելագործմանը՝ չափանիշ ընդունելով ազգային կենսական շահերի օգտին հայության՝ տարրեր բնագավառներում ունեցած ներուժի օգտագործման արդյունավետությունը։ Այս ծրագիրը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ համայն հայության ազգային քաղաքացիական իրավունքների և պարտականությունների խնդիրը՝ հաշվի առնելով ազգային ու միջազգային տարրեր բնագավառների պայմաններն ու պահանջները։

1990 թվականից սկսած այս, ինչպես նաև ՀԱՅՔ-ի մյուս ծրագրերի իրագործման կարեռ միջոցներից է հայության տարրեր շրջանակներում հատուկ սեմինար-խորհրդակցությունների անցկացմամբ տվյալ հարցերի և խնդիրների վերաբերյալ տարրեր խավերի տեսակետները, գաղափարներն ու առաջարկները հավաքելը և օգտագործելը համապատասխան ծրագրի կատարման, այս դեպքում ազգային կառավարման համահայկական համակարգի կատարելագործման համար։ Միաժամանակ դրանք համարելով ներկայացվում են մասնագիտական ու կառավարական կառույցներին, ինչպես նաև հասարակությանը՝ ՀԱՅՔ-ի տարրեր իրատարակությունների, տեղեկագրերի, ինչպես նաև այլ իրատարակությունների միջոցով։

ՍԵՄԻՆԱՐ - ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ

ՕՐԻՆԱԿ

ՀԱՅՔ հաստատության թիվ 2 ծրագրով տվյալ վայրում անցկացվող հատկապես առաջին սեմինար-խորհրդակցությունում նպատակահարմար է կարծիքներ, տեսակետներ հայտնել, քննարկել, եզրակացնել, ու եթե հնարավոր է՝ վերջում նաև առաջարկել անել հետևյալի մասին.

- 1) Հայությունն ինչու՞ պետք է գոյություն ունենա:
- 2) Ի՞նչ իրավունք ու նաև պարտականություն ունենք պահելու մեր և մեր նոր սերնդի ազգային պատկանելությունը, որով պայմանավորված է հայության գոյությունը:
- 3) Ինչո՞ւն է կայանում, ո՞րն է եղել և է՝ այդ գոյության իմաստը՝ անձնական, ազգային և մարդկային առումով:
- 4) Ինչպե՞ս կարելի է հային հայ լինել այսօր՝ գաղափարով, ազգային -քաղաքացիական կարգավիճակով և գործով:
- 5) Հայաստանի Հանրապետության նկատմամբ որևէ վայրում ապրող, որևէ հայի ազգային քաղաքացիական կարգավիճակն ի՞նչ նշանակություն կարող է ունենալ՝ գտվյալ հայի և նրա սերնդի համար:
- զ ամբողջ հայության և Հայաստանի համար:
- 6) Հետևապես ինչպիսի՞ն պետք է լինի այդ կարգավիճակը:
- 7) Այդ կարգավիճակի գործնականացման համար առկա ի՞նչ հնարավորություններ և միջոցներ կան: Դրա իրականացման համար անցումային փուլեր պե՞տք է սահմանել, թե՞ դրա կարիքը չկա:
- 8) Հայկական ազգային քաղաքացիության իրավական և գործնական համատեղելիությունը տվյալ և այլ երկրներում բնակվելու կամ քաղաքացի լինելու կարգավիճակի հետ:
- 9) Կազմակերպչական ինչպիսի՞ միջոցներով կարելի է հաշվարկել, ծրագրել և կատարելագործել ազգային կառավարելությունը:

10) Համայն հայության կողմից ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵԿ ՇԱԿԱՏԱԳԻՐ գաղափարի հստակեցման, գիտակցման և ընդունման նշանակությունը:

11) Ազգային կառավարման համահայկական և տեղական կառույցներն ինչպիսի՞ն պետք է լինեն, որպեսզի ապահովեն ՄԵԿ ԱԶԳ, ՄԵԿ ՀԱՅՐԵՆԻՔ գաղափարի գործնականացումը՝ համախմբելով ամբողջ ազգի ներուժը:

12) Այլ հարցեր, երևույթներ, խնդիրներ, առաջարկներ...

ՀԱՅՔ հաստատության թիվ 2 ծրագրի («Ազգային կառավարման համահայկական կառույցի հարցի ուսումնասիրումը և կատարելագործումը») շրջանակում՝ Հայաստանի Սահմանադրության մեջ արտերկրի հայության քաղաքացիական կարգավիճակի վերաբերյալ հարցի մասին վերջին տարիների ընթացքում եղած մի շարք դիտարկումների, քննարկումների և խորհրդակցությունների հիման վրա 1994 թվականի հունիսի 11-ին տեղի ունեցավ սեմինար - խորհրդակցություն:

1. Այդ եզրափակիչ սեմինարում ներկայացված լրացուցիչ տեսակետների, օրինակների և փաստարկների քննարկումից հետո մասնակիցները եկան հետևյալ եզրակացության.

Աշխարհի որևէ վայրում ապրող յուրաքանչյուր անձնավորություն, որի ծնողներից մեկը եղել է ազգությամբ հայ, իրավունք ունի դառնալու Հայաստանի Հանրապետության քաղաքացի, եթե այդ ցանկանա:

Սահմանադրության այդ դրույթի ընդունումը բխում է՝
- համամարդկային քաղաքակրթ, բարոյական և ժողովրդավարական սկզբունքներից,
- հայ ժողովրդի պատմական անցյալից,
- հայ ժողովրդի ներկա իրավիճակից և
- ազգային - պետական գերազույն շահերից:

ՀԱՅՔ

ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՅՔ հաստագության՝ բազում վարիների ընթացքում մշակած փաստ հիմնական ծրագրերը կոչված են հայության ամենակենսական վարքեր բնագավառների խնդիրները բացահայփելու, վերլուծելու և գործնական ծրագրեր առաջադրելու համար:

Թիվ 1 ծրագրով խնդիր է դրվում վերականգնել հայի գոհմիկ հարազարդ կերպարը, որով նա կարողանա ճանաչել իր ազգային հավաքածքը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ համամարդկային արժեքներ են, և կկարողանա դրանք կիրառել ամենօրյա կյանքում՝ անձնական, ընդունեկան, ընկերային և ազգային հարաբերություններում:

Այս ծրագրով միաժամանակ ջանքերն ուղղվում են բացահայփելու հայ Ազգային Գաղափարախոսության բաղկացուցիչ վարքերը, բնորոշելու դրանց ունեցած պարմական դերը և վերասահմանելու՝ ազգը գնահատի 21-րդ դար առաջնորդելու կարողությամբ օժիված գաղափարախոսությունը որպես ազգային հմտնիքներ՝ վարակամերժ կարողություն, համահայկական ազգապետության կառույցի շաղախ և ազգային կենսագործումների հիմք: ազգապետության կառույցի շաղախ և ազգային կենսագործումների հիմք:

Թիվ 2 ծրագիրը վերաբերում է հայության կառավարելության կարգարելագործմանը՝ չափանիշ ընդունելով ազգային կենսական շահերի օգիքին հայության վարքեր բնագավառների ներուժի օգիտագործման արդյունավետությունը: Սույն ծրագիրը ներառում է նաև համայն հայության ազգային քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների հարցը՝ հաշվի առնելով ազգային և միջազգային վարքեր բնագավառների պայմաններն ու պահանջները:

Թիվ 3 ծրագիրը վերաբերում է ազգային արքաքին քաղաքական դոկտրինի՝ սկզբունքներին և դրանցից բխող ծրագրերի գիտական ըննարկմանը:

Թիվ 4 ծրագիրն իր հերթին քննարկում է Հայաստանի և հայության անվտանգության և կենսական շահերի պաշտպանության հարցերը:

Թիվ 5 ծրագիրը վերաբերում է ամբողջ հայության հաղորդակցության համակարգի կարարելազործմանն ու «Հայություն» փվյալների բանկի սփեղծմանը: Ծրագրի անհրաժեշտությունը բխում է այն բանից, որ հայության՝ ազգային գործնական ամբողջություն կազմելու խնդիրը պահանջում է սերվ համագործակցություն, որը կարող է իրագործվել համապատասխան հաղորդակցության համակարգի առկայությամբ:

Թիվ 6 ծրագիրը նախադեսում է հայության կրթական, գիտական և գեինոլոգիական կարողությունների հաշվառում, ներուժի գնահատում, ինչպես նաև այդ բնագավառների զարգացման այնպիսի ռազմավարության մշակում հայության և Հայաստանի համար, որն առավելագույն չափով համապատասխանի հայ անհատի և ամբողջ ազգի կարողություններին, կարիքներին ու բարգավաճման խնդիրներին:

Թիվ 7 ծրագիրը ուղղված է Կովկասում և, մասնավորապես, Անդրկովկասում խաղաղությանը և բոլոր բնագավառներում համագործակցությանը՝ գիտական միջոցներով նպաստելուն:

Թիվ 8 ծրագիրը նպագակ է հետապնդում սպուգել ՇԱՅՔ-ի ծրագրերի համապատասխանությունը, նպագակահարմարությունը և կարգադրման գործընթացի արդյունավետությունը՝ հենվելով համակարգային մոդելներին, մաթեմատիկական մոդելավորման և կառավարման գետության վրա:

Թիվ 9 ծրագիրն ուղղված է ծավալելու սիյուռքահայության և նրա միջոցով՝ նաև գարբեր երկրների գործարար, մասնագիտական և գիտադիմումների արդյունավելու գործակցությունը՝ Հայաստանի հետ:

Թիվ 10 ծրագիրը նախադեսում է բնորոշել հայ կնոջ ժամանակակից կոչումը ազգի կենսունակության պահպանման և զարգացման խնդրում՝ ուսումնասիրելով և բացահայտելով հայ կնոջ գոհմիկ կերպարը և պատմական դերը: